ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

# VIII

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Մ. Մ. ԼԻՏՎԻՆՈՎ

# ԽԱՀՄ-Ն ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԶՈՐ ՀԵՆԱՐԱՆՆ Է

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1987

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

3 1 JAN 2018

Մ. Մ. ԼԻՏՎԻՆՈՎ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

# ԽՍՀՄ-Ն ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԶՈՐ ՀԵՆԱՐԱՆՆ Է

ՀԱՌ՝ ԱՐՏԱՍԱՆԱՄ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
1936 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԽԻՎ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ ● 1937

Հանրապետական գրադարան
ՍԱՀՄԱՆ
ՀԱՄԱՐ
1-36869ր

М. М. ЛИТВИНОВ

# СССР МОГУЧИЙ ОПЛОТ ВСЕОБЩЕГО МИРА

Речь на чрезвычайном
VIII Всесоюзном Съезде Советов
28 ноября 1936 г.

АРМПАРТИЗДАТ, ЕРЕВАН, 1937

Ընկերնե՛ր, Համագումարի պատգամավորնե՛ր:

Թույլ տվեք նախ և առաջ նախադրուշացնել ձեզ, որ այսօր ես հանդես եմ գալիս այստեղ ոչ թե միջազգային դրության տեսությամբ, որովհետև համագումարի որակարգում այդպիսի կետ չկա (ծիծաղ, հավանության արտահայտություններ), այլ Սահմանադրության նախագծի վերաբերյալ զեկուցման առթիվ: Ընկեր Ստալինը նշեց այն հետաքրքրությունը, որին արժանի է արտասահմանի հասարակական կարծիքը Սահմանադրության նախագծի վերաբերյալ, և ես որպես մի մարդ, որը նստած և արտասահմանին նայող պատուհանի մոտ (ծիծաղ), ուզում եմ ձեզ հաղորդակից դարձնել այդ նյութի շուրջը մի քանի մտքերի:

Ընկեր Ստալինը տվեց Սահմանադրության նախագծի արտասահմանյան քննադատության փայլուն և ամենասրամիտ վերլուծությունը: Սակայն պետք է խոստովանել, որ Սահմանադրության նախագիծն արտասահմանում դիմավորվեց ո՛չ միայն քննադատությամբ, ո՛չ միայն տարակույսներով ու սկեպտիցիզմով, այլև խրախուսական ու գովասանական գնահատականներով: Արտասահմանի հասարակական կար-

ծիքի մի քանի շրջաններում հակում յերևան յեկավ հովանավորողի դերը ընդունելով՝ խրախուսել մեզ՝ վորպես իր ընտանիքը վերադարձած, զղջացած անառակ վորդու։ Իբր թե Խորհրդային Միությունը վերադարձել է դեպի յեվրոպական դեմոկրատիզմը, դեպի բուրժուական ազատությունները։ Ցեսս ուզում եմ մի քանի ճշգրտումներ մտցնել այդ հարցի մեջ։



## ՖԱՇԻԶՄԸ ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԻ ՅԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐՆ Է

Մենք, մարքսիստներս, միշտ հատուկ կարծիք ենք ունեցել դեմոկրատիզմի և բուրժուական ազատությունների եյության մասին։ Այդ կարծիքն արտահայտեց ընկեր Ստալինը, յերբ նա իր զեկուցման մեջ խորհրդային Սահմանադրության ընձեռած ազատությունները համեմատում էր նույնանուն, բայց բնավ վոչ հավասար նշանակություն ունեցող բուրժուական ազատությունների հետ։ Բայց վերցնելով նույնիսկ այդ ազատություններն իրենց պայմանական, սահմանափակ նշանակությամբ, վորով դրանք 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի ընթացքում անտարակույս խոշորագույն պրոգրեսիվ դեր են խաղացել, և բուրժուազիան իրավամբ պարծենում էր դրանցով Ֆրանսական հեղափոխության ժամանակներից ի վեր, մենք, կարծեմ, այժմ կարող ենք խոսել այդ ազատությունների մասին, վորպես անցյալի գիրկն անցնող մի ինչ վոր բանի մասին։

Իսկապես, յեվրոպական բուրժուական 26 յերկիրներից այսպես կոչված դեմոկրատիզմը և բուրժուական ազատությունները պահպանվել են հազիվ թե 10-ից ավելի յերկիրներում։ Մյուս 16 յերկիրները, այսինքն՝ բուրժուական Յեվրոպայի յերկու յեր-

բորդ մասը, ունեն ֆաշիստական կամ կիսաֆաշիստական դիկտատուրայի ռեժիմ: Յերբեմն ֆաշիստական և կիսաֆաշիստական յերկիրների տարբերությունը վոչ թե վորակական, այլ քանակական է: Դա ավելի շուտ յերանգների կամ նույնիսկ սոսկ արտաքին նշանների տարբերություն է: Մի քանի յերկիրներ իրենց բացահայտորեն ֆաշիստական են հայտարարում, իսկ մյուսներն իրենց ամբողջ քաղաքական ու սոցիալական կազմակերպությամբ նմանվելով ֆաշիստական յերկիրներին, ներքին, իսկ յերբեմն նաև արտաքին քաղաքականության նկատառումներով, զերադասում են խուսափել ֆաշիստական անունից:

Թե ինչ կերպարանք ունեն դեմոկրատիզմն ու ազատությունները ֆաշիստական յերկիրներում, հարկ չկա պատմելու: Ֆաշիզմն ինքը պարծենում է, թե նա դեմոկրատիզմի և ամեն տեսակ ազատությունների ժխտումն է հանդիսանում: Վորովհետև, ի՞նչ է ներկայացնում ֆաշիզմը: Յես կուզեի տալ նրա՝ վոչ թե փիլիսոփայական կամ գիտական, այլ առորյա, հանրահասկանալի և միևնույն ժամանակ ճիշտ բնորոշումը: Մենք, ընկերներ, ձեզ հետ միասին գիտենք, թե ինչպիսի հակասություններ են քայքայում բուրժուական հասարակությունը: Այդ հակասությունները վոչ միայն հնարավոր չէ վերացնել, այլև դրանք անխուսափելիորեն աճում ու բաղմանում են: Դրանք առանձնապես սրվեցին համաշխարհային պատերազմի հետևանքով և ցայտուն արտահայտություն ստացան 1929 թվականին սկսված տնտեսական ճգնաժամում: Մի քանի յերկիրներում իշխանության գլխի մոտ իրար փոխարինող բուրժուա-



կան վոչ մի կուսակցության չեր հաջողվում հաղթահարել այդ ճգնաժամը: Այդ հողի վրա աճում եր քաղաքացիների դժգոհությունը: Յեվ ահա քաղաքական թատերաբեմ է յելնում, կամ «նախախնամության կողմից ուղարկվում է» մի հանճարեղ մարդ, վորը հանձն է առնում դուրս բերել պետությունը դժվարին դրությունից, առանց ձեռք տալու նրա հիմքերին: Նա գործի յե գնում նույնքան «հանճարեղ», վորքան և պարզ միջոց: Յեթե հնարավոր չէ վերացնել գոյություն ունեցող դժգոհությունը և վերջինս ծնող պատճառները, ապա միանգամայն հեշտ է վերացնել դժգոհներին (ընդհանուր ծիծաղ), բավական է արգելել քաղաքացիներին դժգոհություն արտահայտել, զրկել նրանց մտքեր, ցանկություններ ու պահանջներ արտահայտելու բոլոր միջոցներից, զրկել նրանց թերթերից, ժողովներից, միություններից, կուսակցություններից, իսկ համառողների և հատկապես անցյալում մեղանչածների համար կառուցել ու հարմարեցնել վորոշ թվով բանտեր ու համակենտրոնացման ճամբարներ, ինչպես նաև կախաղաններ ու կառավնարաններ, իսկ բնակչության մի մասն իր վոչ պատշաճ ծագում ունենալու համար որենքից դուրս հայտարարել ու տալ բնակչության մյուս մասի ձեռքը՝ թալանելու և կողոպտելու: Հենց այդ է կոչվում ֆաշիզմ (ծիծաղ, ծափեր): Եվ ի՞նչ տեղ մնաց այստեղ դեմոկրատիզմին ու ազատություններին:

Բայց դուք դուցե կասեք, թե քաղաքացիների նանձահարման այդ մեթոդն որիգինալ լինելու հավակնություն չի կարող ունենալ: Իսկ ձեզնից նրանք,

ովքեր կարդացել են դրող Գլեբ Ուսպենսկու յերկերը, թերևս կվերհիշեն, վոր այդ մեթոդը լիովին համապատասխանում է վոստիկանական պահակ Միմրեցովի կլասիկ կանոնին՝ «քաշ տալ և բաց չթողնել» (ծիծաղ, ծափեր)։ Ձեզնից վոմանք թերևս կասեն, թե ֆաշիստական կուսակցության նախատիպը պետք է համարել մեր ավագ սերնդին քաջածանոթ «Ռուս ժողովրդի միությունը» կամ «Միխայիլ Արխանգելի միությունը» (ծիծաղ, ծափեր)։ Ցես, ընկերներ, ձեզ հետ չեմ վիճի (ծափեր)։ Ցես ուզում եմ միայն ձեզ դաղափար տալ այն մասին, թե ինչ վիճակի մեջ են աղատությունները որինակելի ֆաշիստական պետության մեջ, վորին ավելի կամ պակաս մոտենում են ֆաշիստական կամ կիսաֆաշիստական յերկիրները։ Այդպիսի մի քանի կիսաֆաշիստական յերկիրների առանձնահատկությունը պետք է համարել զինվորականության տիրապետող ազդեցությունը, զինվորականությունը, վորը հրամաններ է տալիս պաշտոնական կառավարությանը, սպառնում է նրան տեռորով, իսկ յերբեմն էլ իրականացնում է տեռորը և հանդիսանում է պետության վաստակաշատ տերը։ Պետության սպասավորից, վորպիսին կարծես թե պետք է լինի բանակը դեմոկրատիկ պետության մեջ, նա վաստորեն դառնում է նրան հրամայող։

Ինչպես արդեն ասացի, Ցեվրոպայում այնուամենայնիվ մնացել են 10 յերկիր, վորոնք դեռ պահպանել են դեմոկրատական փիլոնների մաքրությունը։ Պահպանել են։ Այո, բայց արդյոք յերկար կպահպանեն, ահա թե վորն է հարցը։



Համենայն դեպս այդ յերկիրներում, ֆաշիստական յերկիրների առատաձեռն վարձատրվող ագիտացիայի ազդեցությամբ և նրա շնորհիվ, ծնունդ են առնում ու ամրանում են այնպիսի տարբեր, վորոնք բացեիբաց քարոզում են վոչնչացնել դեմոկրատիզմի ու դեմոկրատիկ ազատությունների մնացորդները։ Այդ յերկիրների մեծ մասում գործնականորեն արդեն դրված է այս կամ այն կուսակցությունն արգելելու հարցը, ընդ վորում դուրս է գալիս, վոր սովորաբար այդպիսի կուսակցություններ հանդիսանում են, իհարկե, բանվոր դասակարգի և գյուղացիության կուսակցությունները, գժգոհների կուսակցությունները։ Ինչպես մենք տեսանք, գժգոհներին արհեստականորեն ճնշելը և միանալու հնարավորություններից նրանց զրկելը հենց ֆաշիզմի սկիզբն է։ Պատահում է, վոր ազգաբնակության հսկայական մեծամասնության և պառլամենտի մեծամասնության վրա հենվող կառավարությունը, տառացիորեն ահաբեկվում է և հարկադրված է լինում ականջ դնել առավելապես փոքրամասնության ձայնին, յեթե միայն վերջինս իր տրամադրության տակ ունի մամուլի բավական քանակությամբ ճարպիկ ու ճչան որգաններ։ Այդպիսի թերթերի ձայնը հրամցնում են վորպես յերկրի հասարակական կարծիք, իսկ թե այդ վորքան է համապատասխանում իրականությանը, մենք վերջերս տեսանք Ամերիկայի Միացյալ Նահանգներում տեղի ունեցած ընտրությունների որինակով։ Այդ յերկրի մամուլի 90 տոկոսը հանդես եր գալիս նախագահ Ռուզվելտի դեմ։ Կարելի յեր կարծել—յեթե թերթերը հա-

մարենք հասարակական կարծիքի արտահայտիչ—թե ամբողջ յերկիրը պարոն Ռուզվելտի դեմ է, այնուհանդերձ պարոն Ռուզվելտը փայլուն հաղթանակ տարավ ընտրությունների ժամանակ, ստանալով ձայների ճնշող մեծամասնությունը: Կատարելապես պարզ է, որ յերկրի հասարակական կարծիքի արտահայտիչը վիճելու հավակնություն չունեցող մամուլի ընդհանուր ձայնը յերբեմն ներկայացնում է ինչին փոքրամասնությունը, իսկ յերբեմն՝ լոկ մի քանի լրագրային մաղնատների կամ այդ թերթերը ֆինանսավորող արդյունաբերական տրեստների կարծիքը: Այնուամենայնիվ այդպիսի թերթերը հաճախ հսկայական ազդեցություն են գործում յերկրի ներքին ու արտաքին քաղաքականության վրա, կասեցնում են դեմոկրատիկ կառավարության գործողությունները:

Նույնիսկ դեմոկրատիկ յերկրներում քաղաքականության վրա ճնշում գործադրող խոշոր գործոն է հանդիսանում յերբեմն նաև զինվորականության վերնախավը: Հազիվ թե այդպիսի կացությունն իրոք համապատասխանում է դեմոկրատիա հասկացողությանը: Իսկ յեթե այդպիսի յերկրում այժմ գանվում են ազնիվ ռադիկալ տարրեր, որոնք բանվորների ու գյուղացիների հետ միասին փորձում են պաշտպանել դեմոկրատիկ կարգերը և ազատությունները, ապա նրանք կատաղի դրսևի յեն յենթարկվում սեփական ֆաշիստական տարրերի կողմից, յերբեմն էլ բռնի կերպով տապալվում են իրենց զինվորականության կողմից, որին ազնության են հասնում ֆաշիստական ու կիսաֆաշիստական յերկիրները: Դրա փայլուն



որինակը մենք տեսնում ենք Իսպանիայում, որն ուներ բուրժուական դեմոկրատիզմի բոլոր կանոնների համաձայն կառուցված ընդհանուր ընտրություններով կազմված կառավարություն: Բայց որովհետև այդ կառավարությունը հոչակեց դեմոկրատիզմի պահպանման, ազատությունների պահպանման, պառլամենտարիզմի պահպանման ծրագիր, ուստի նրա դեմ ապստամբեցին մի բուռն գեներալներ ու սպաներ, որոնք ոժանդակություն են ստանում ուտարերկրյա ֆաշիստական կառավարություններից և փորձում են տապալել իսպանական կառավարությունը՝ ֆաշիզմի լոզունգով: Սակայն ամենից ավելի ընորոշն այն է, որ այդ բացահայտ կազմակերպված պայքարը համակրական վերաբերմունք և նույնիսկ եյական ոժանդակություն է գտնում դեմոկրատիկ պետությունների կողմից:

# ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

Ահա, ընկերներ, ինչ բախտ ունեն ներկայումս դեմոկրատիզմը և բուրժուական ազատությունները Եվրոպայում, և ահա թե ինչու մենք չենք կարող մեզ առանձնապես չոյված համարել, երբ Սահմանադրության նախագծի կապակցությամբ մեզ ասում են, թե մենք վերադառնում ենք յեվրոպական դեմոկրատիզմի դերկը, դեպի բուրժուական ազատությունները: Ավելի ճիշտ կլինի ասել, որ զառամող բուրժուազիայի թույլ ձեռքերից մենք վերցնում ենք դեմոկրատիզմի վայր ընկնող դրոշը, ազատությունների դրոշը և այդ հասկացողությունները լցնում ենք նոր, հարուստ, խորհրդային բովանդակությամբ (ծափեր): Սակայն, Խորհրդային Միությունը, զառնալով դեմոկրատիզմի ու ազատությունների հենարանը, կոչ չի անում ստեղծել միջազգային բլոկ՝ պայքարելու համար դեմոկրատիան ու ազատությունը ժխտող ֆաշիզմի դեմ: Մենք, որպես պետություն, գործ չունենք այս կամ այն յերկրի ներքին ֆաշիստական ռեժիմի հետ: Մյուս յերկիրների հետ ունեցած մեր համագործակցությունը, Ազգերի Լիգային ունեցած մեր մասնակցությունը հիմնված են յերկու սիստեմների՝ սոցիալիստականի ու կապիտալիստականի խաղաղ համակեցության սկզբունքի վրա, ընդվորում մենք գտնում ենք, որ կապիտալիստականի մեջ և մնում նաև ֆաշիստական կարգը: Սակայն այժմ ֆաշիզմը գաղարում է այն յերկիրների ներքին գործը լինելուց, որոնք ֆաշիզմ են դավանում: Կար ժամանակ, երբ ֆաշիզմի նախահայր պարոն Մուսսոլինին հայտարարում եր, թե ֆաշիզմն արտահանման առարկա չե: Պետք է արդարացի լինել և ասել, որ պարոն Մուսսոլինին յերկար տարիներ հավատարիմ եր այդ հայտարարությանը, և Իտալիայի սահմաններից դուրս ֆաշիզմը տարածելու համար պայքարելը նրա արտաքին քաղաքականության տարրը չեր կազմում: Բայց այդ տևեց լոկ այնքան, մինչև որ պարոն Մուսսոլինիի ֆաշիզմը Բեռլինում անցավ կատարելագործման կուրսը, կամ, ինչպես մեզ մոտ են ասում, վերավորակավորման կուրսը (ծիծաղ, ծափեր) և բեղմնավորվեց գերմանական, այսպես կոչված նացիոնալ-սոցիալիզմի թեորիանեռով: Ի տարբերություն իտալական ֆաշիզմից, գերմանական նացիոնալ-սոցիալիզմը, հենց որ հիմնավորվեց իր յերկրի ներսում, իր գործունեությունը փոխադրեց նաև յերկրի սահմաններից դուրս: Փաստերով հաստատված է, որ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության գործունեությունը, որն իր լայն ճյուղավորված գործակալությունն ունի համարյա բոլոր յերկիրներում, չի սահմանափակվում այդ յերկիրների հիշյալ գործակալությունների անդամների սոցիալական ու կուլտուրական սպասարկմամբ, ինչպես ուզում են մեզ հավատացնել ֆաշիզ-

մի պաշտոնական ներկայացուցիչները։ Հաստատված է, որ այդ գործակալությունները լայն ագիտացիա յեն մղում այն յերկրի քաղաքացիների մեջ, որտեղ իրենք գտնվում են, ակտիվ կերպով խառնվում են այդ յերկիրների ներքին քաղաքականությանը, մի կուսակցությունը գրգռում են մյուսների դեմ, ստեղծում են մամուլի որգաններ և ֆինանսավորում են դրանց, չեն խորշում հետախուզական գործունեությունից և կանգ չեն առնում նույնիսկ տեռորիստական գործունեության առջև, ընավ հաշվի չառնելով իրենց հյուրընկալած յերկիրների օրենքները։ Վերջերս այդպիսի գործակալություն հայտնաբերվեց նաև մեր Խորհրդային Միության մեջ։ Սակայն մեզ նվազագույն չափով խակ չի վախեցնում ֆաշիզմի նաև այդ արտաստահմանյան գործունեությունը։ Դա իրական ու մեծ սպառնալիք է այլ յերկրների համար, նրանց բուն գոյության համար, բայց վոչ մեզ համար։ Մենք հեշտությամբ հաշիվ կտեսնենք նրանց հետ խորհրդային տերիտորիայում (ծափեր) սեփական ուժերով, մենք դրա դեմ պայքարելու համար ստարերկրյա ոգնություն չենք խնդրի և դրա համար միջազգային դաշինքներ ու համաձայնություններ չենք կնքի (ծափահարություններ, ծիծաղ)։



# ԽՈՌՎԱՐԱՐ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻ ՅԵՎ ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԴԵՄ

Ֆաշիզմի արտաստահմանյան գործունեությունն ավելի լուրջ բնույթ է կրում, յերբ ստանում է այնպիսի ձևեր, ինչպես օրինակ՝ Իսպանիայում։ Ներկայումս վոչ մի կասկածի յենթակա չէ, որ Իսպանիայի դեմոկրատիկ ընտրություններում աջ կուսակցությունների ջախջախվելուց հետո,—ընտրություններ, որոնք դրսևորեցին ժողովրդի վստահությունն ու նվիրվածությունն այդ ընտրություններով կազմված իսպանական կառավարության հանդեպ,—խուսափարար գեներալները չեյին հանդգնի խռովություն բարձրացնել այդ կառավարության դեմ, յեթե նրանց նախապես խոստացված չլիներ գերմանական կամ իտալական ֆաշիզմի, կամ յերկուսի միատեղ ոժանդակությունը։ Ցավ այդ ոժանդակությունը վոչ միայն խոստացվել եր, այլև ցույց տրվեց։ Գեներալների խռովության կոչն արձագանք չգտավ իսպանական բանակի զինվորների ու նավատորների մեջ, և գեներալները հարկադրված յեղան դիմելու մարոկկոցիների ու ստարերկրյա լեգեոնի ոգնությանը, այսինքն մի լեգեոնի, որը հավաքարկվում է միջազգային արյունծարանդիր ու քրեական

1-36869/ա

տարրերից։ Գեներալ Ֆրանկոն այդ ուժերով դուրս յեկավ իսպանական ժողովրդի դեմ, դրանցով նա արշավում է Իսպանիայի մայրաքաղաքի վրա։ Բայց Մարոկկոյում գտնվող այդ ուժերն էլ չեյին կարող Իսպանիա փոխադրվել, յեթե Ֆրանկոյի տրամադրության տակ չդրվեյին գերմանական ու իտալական ինքնաթիռները և ռազմանավերը։ Նկատի ունեցեք, վոր այդ ժամանակ Գերմանիան և Իտալիան դեռ դիվանագիտական հարաբերություններ եյին պահպանում իսպանական կառավարության հետ և նրանց կողմից Իսպանիայի ներքին պայքարին միջամտելը հանդիսանում եր միջազգային ամենատարրական պարտավորությունների աղաղակող խախտում։ Գերմանական ֆաշիզմը, վորը հագնում է արիական ռասայի պաշտպանի քղամիդ, ըստ յերևույթին բնավ խղճի խայթ չի զգում այն բանից, վոր հարկադրված է իսպանական արիական ժողովրդի դեմ կռվի տանել վոչ արիացի մավրերին (ծափահարություններ, ծիծաղ, աշխուժություն դահլիճում)։ Գերմանիան և Իտալիան բնավ չքաշվելով հայտարարում են, թե իրենք գենեռալ Ֆրանկոյին ոժանդակում են այն պատճառով, վոր չեն ուզում Իսպանիայում ունենալ դեմոկրատիկ կառավարություն, միասնական ճակատի կառավարություն, այլ ուզում են տեսնել այնտեղ գեներալ Ֆրանկոյի կողմից խոստացված մի կառավարություն՝ հիմնված ֆաշիստական սկզբունքներով։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր Գերմանիային և Իտալիային բնավ հարկավոր չե Իսպանիայում ֆաշիզմը ֆաշիզմի սիրուն, վոչ էլ վորևե իդեոլոգիական դոկտրինայի (ուսմունք) հաստատում։ Տվյալ դեպքում ֆաշիզմը մի միջոց է կատարելագործ այլ, բնավ վոչ իդեոլոգիական նպատակների հասնելու համար։

# «ՉՄԻՋԱՄՏԵԼՈՒ» ՖԱՐՍԸ

Ֆրանսիայի և Անգլիայի նախաձեռնությամբ, խաղաղությանն սպառնացող միջազգային հնարավոր բարդությունները կանխելու դրդապատճառներով, ստորագրվեց խոպանական գործերին չմիջամտելու միջազգային համաձայնությունը, ըստ որի խոպանական կառավարությանը կամ խռովարարներին որևե ռազմանյութ չպետք է մատակարարվեր: Այդ առաջարկն անտարակույս հակառակ էր միջազգային հարաբերությունների սովորական պատկերացումներին, որոնք թույլ են տալիս մի կառավարության ամեն տեսակ զենք մատակարարել մի ուրիշ, իր ճանաչած կառավարության և արգելում են նման մատակարարումները որևե այնպիսի յերկրի խռովարարներին, որի հետ դիվանագիտական հարաբերություններ են պահպանվում: Այնուամենայնիվ հաշվի առնելով այն պաշտոնական պատճառաբանությունները, որոնցով հիմնավորված էր այդ առաջարկը, խորհրդային կառավարությունը միացավ դրան: Բացի դրանից, նա յենթադրում էր, որ ըստ եությեան այդ համաձայնությունը, բոլորի կողմից լոյալորեն պահպանվելու դեպքում, վնաս չի հասցնի խոպանական կառավարությանը, որովհետև զեներալ Ֆրանկոն ինքն իր դլխի թողնվելու դեպքում որչ մի շանս չուներ խռովության ճնշումը կանխելու: Կրկնում եմ, համաձայնությանը մեր միանալու ինքնըստինքյան հասկանալի նախադրյալն այն էր, որ այդ համաձայնությունը լոյալ կերպով կատարեն նրա բոլոր մասնակիցները: Գերմանիան և Իտալիան, ինչպես և Ֆաշիստական Պորտուգալիան, յերկար ժամանակ ձգձգում էին իրենց պատասխանը չմիջամտելու համաձայնությանը միանալու առաջարկին, զանազան պատրվակներով ձգձգում էին այդ նյութի շուրջը բանակցություններ վարելը և այդպիսով շահած ժամանակն ոգտագործեցին զեներալ Ֆրանկոյին արագորեն ու առատությամբ ավիացիա, տանկեր, հրետանի և սպառազինման այլ առարկաներ մատակարարելու համար: Նրանց այդ անհրաժեշտ էր նրա համար, որպեսզի հետագայում Իսպանիայում գերմանական ու իտալական ծագում ունեցող սպառազինում յերևան բերվելու դեպքում (Փարեզի լիներ արդարանալ, թե դա Իսպանիա յե ընկել համաձայնությունն ստորագրելուց առաջ: Բայց ահա համաձայնությունն ստորագրեցին նաև Ֆաշիստական յերկիրները:

Շարաթներն անցնում էին շարաթների հետևից և ԽՍՀՄ-ն, Ֆրանսիան, Անգլիան ու մյուս պետությունները լոյալ ու բծախնդիր կերպով կատարում էին իրենց պարտավորությունները, մինչդեռ Գերմանիան և Իտալիան միջազգային պարտավորությունների հանդեպ ունեցած իրենց հատուկ արհամարհանքով՝ շարունակում էին դաղտնի կերպով զեներալ Ֆրանկոյին մատակարարել ամեն տեսակ ռազմական ու ծովային սպառազինություն, դրա համար ոգտագործելով առավելապես պորտուգալական պլացդարմ-

մը։ Այդ մատակարարումը բոլորի խոսակցության առարկա, ուրախ և դարձել։ Դրա մասին գրել են քաղաքական բոլոր ուղղություններին, չբացառելով նաև ամենաաջ ուղղություններին պատկանող ռուսերկրյա թերթերի թղթակիցները, դրա մասին պատմել են բազմաթիվ ականատեսներ ու վկաներ։ Այդ անտարակույս հայտնի յեր նաև համապատասխան նավահանգիստներում գտնվող ռուսերկրյա հյուպատոսներին, որոնց զեկուցագրերը ցավոք սրտի մինչև այժմ չեն հրապարակվել։

Վերջապես իսպանական կառավարությունը Ազդերի Լիգայում և առանձին պետություններին ուղղած հայտագրերով ձևականորեն հայտարարեց գեներալ Ֆրանկոյին ռազմամթերք մատակարարելու մասին, որը կրկնակի ապօրինի յե՝ նախ սովորութային իրավունքի տեսակետից և յերկրորդ՝ կայացած միջազգային համաձայնության հետևանքով։

Այն ժամանակ խորհրդային կառավարությունը դիմեց դեսպանների Լոնդոնի կոմիտեյին, որը, ինչպես թվում եր մեզ, ստեղծվել եր ապահովելու համար համաձայնության բոլոր մասնակիցների ստանձնած պարտավորությունների կատարումը և այդ պարտավորությունների խախտման դեպքերի հետաքննությունը։ Սակայն մենք սխալվեցինք։ Լոնդոնի կոմիտեն չմիջամտել խոսքը հասկացավ այն մտքով, թե նա ինքը չպետք է միջամտի իսպանական անցքերին միջամտելու գործին (ծիծաղ)։ Լոնդոնի կոմիտեն իր խնդիրը հասկացավ այն իմաստով, թե ինքը պետք է հետևի միայն, որ չմիջամտելու համաձայնությամբ վորոշ պարտավորություններ ստանձնած պետություններն իրենք չխոստովանեն այդ պարտավորությունների խախտումը և քանի դեռ նրանք ժխտում են, թե իրենք վորևե հանցանք ունեն, նրանց բացատրությունները բավարար են համարվում և դրանով վերջանում են կոմիտեյի ֆունկցիաները (ծիծաղ)։

Կոմիտեյի այդպիսի վորոշումը նախապես սանկցիա յեր տալիս-ֆաշիստական պետությունների կողմից առաջիկայում ևս ամեն կերպ իրենց պարտավորությունները խախտելուն։ Խորհրդային կառավարությանն այլևս վոչինչ չեր մնում անելու, բայց յեթե Լոնդոնի կոմիտեյին լոյալ կերպով հայտարարելու — թեպետ բնավ պարտավոր չեր անել այդ,— վոր ինքն այլևս իրեն բարոյապես ավելի կապված չի համարում համաձայնությամբ, քան վերջնիս մյուս մասնակիցները։

Գերմանական և իտալական ռազմական մատակարարումների արդյունքն այն յեղավ, վոր գեներալ Ֆրանկոյին հաջողվեց իր մարոկկոցի զորքերով դրավել կարևորագույն ստրատեգիական կետեր և ընդհուպ մոտենալ Մադրիդին։ Արդյունքն այն յեղավ, վոր մի քանի շաբաթվա ընթացքում իսպանական ժողովրդի գեղեցիկ մայրաքաղաքի վրա զոր-դիշեր թափվում են հարյուրավոր ու հազարավոր կիլոգրամ պայթուցիկ և հրձիգ ռումբեր ու հրետանու արկեր, սպանվում ու հաշմանդամ են դառնում հարյուրավոր ու հազարավոր խաղաղ քաղաքացիներ, կանայք ու յերեխաներ, կործանվում են ճարտարապետության, գեղանկարչու-

թյան ու քանդակագործության մեծագույն կոթողները, հնության կոթողները, վորոնք կազմում են ամբողջ մարդկության գանձարանը։ Եվ այդ ավերները կատարվում են գերմանական ու իտալական ինքնաթիռներից, գերմանական ու իտալական ռազմանավերի ձեռքով (մի ձայն դահլիճից՝ «Խայտառակություն»)։ Գերմանո-իտալական միջազգային ֆաշիստական առաջին միացյալ ակտիվ համագործակցության այդ ավերիչ հերոստրատյան աշխատանքն ընդմիշտ կմնա վորպես ամենախայտառակ մի էջ միջազգային հարաբերությունների պատմության մեջ, Եվրոպայի պատմության մեջ (բացականչություններ տեղերից՝ «Ճիշտ է», ծափահարություններ)։ Ցես, ընկերներ, համոզված եմ, վոր արտահայտած կլինեմ ամբողջ Համագումարի զգացմունքը, յեթե ասեմ, վոր այս պահին, յերբ մենք խոսում ենք Իսպանիայի մասին, մեր մտքերը, մեր զգացմունքները ջերմ համակրանքով ու հիացմունքով լի ուղղված են դեպի Մադրիդի հերոս պաշտպանները, դեպի իսպանական հանրապետական բանակի մյուս ճակատներում՝ բարբարոսության ու վանդալիզմի ուժերի դեմ կատաղորեն դիմադրող քաջերի մարտիկները (բուռն և յերկարատև ծափահարություններ. բոլորը վոտքի յեն կանգնում. Համագումարի պատգամավորներն ովացիայով դառնում են դեպի Իսպանական հանրապետության դեսպան պարոն Պասկուան, վորը գտնվում է դիվանագիտական ռոյակում։ Բացականչություններ. «Կեցցե՛ հերոսական իսպանական ժողովուրդը»)։



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

Մեր Խորհրդային պետությունն ինչո՞ւ յե հետաքրքրվում իսպանական անցքերով։ Մեր Միության ընակչությունն իսպանական կանանց ու յերեխաների ոգին իր կատարած առատաձեռն նվիրատվություններով, իր կոլեկտիվ բանաձևերով և Իսպանիայի հասցեին ուղղված վողջույններով ու այլ ցույցերով վկայել է իր կենդանի համակրանքը, վորով ինքն ամենադեմոկրատիկ և ամենաազատ յերկրից հետևում է այն քաջարի ու տանջալից պայքարին, վորը մղում է, թեկուզ և հեռավոր մի յերկրի ժողովուրդը, հանուն իր դեմոկրատիզմի, հանուն իր ազատությունների, ընդդեմ ֆաշիստական բարբարոսության, ընդդեմ ֆաշիստական սարկացման։ Նույնն է վկայում նաև հենց նոր ձեր արած ցույցը։

Սակայն դա գործի միայն հուզական կողմն է. կա նաև քաղաքական-պետական կողմը, վորը և ուզում եմ բացատրել։ Մեր թշնամիները պնդում են, թե մենք իբր ձգտում ենք Պիրենեյան թերակղզում ստեղծել կոմունիստական, խորհրդային պետություն, վորը մտադիր ենք նույնիսկ մտցնել Խորհրդային Միության մեջ (ծիծաղ, ծափահարություններ)։ Յեթե կան այդ հիմար պնդումներին հավատա-

ցող միամիտ մարդիկ, ապա նրանք քիչ չպետք է զարմանան, վոր մենք չհետաձգեցինք 8-րդ Համագումարը, չսպասեցինք, վոր Սահմանադրության մեջ մտցնենք 12-րդ հանրապետությունը՝ իսպանական սոցիալիստական հանրապետությունը (ծիծաղ, յերկարատև ծափահարություններ)։ Ասենք նրանց բացատրում են, թե մենք արդեն հույս չունենք կոմունիզմի համար նվաճելու ամբողջ Իսպանիան և պատրաստենք զոհանալու նրա կատալոնական անկյունով, Կատալոնիայի անկախ հանրապետության ստեղծումով, վորպեսզի այնտեղից արշավ դործենք ամբողջ Ցեվրոպայի վրա (ծիծաղ)։ Փոքրիկ յերեխաների կամ մեծ հիմարների համար ասված այսպիսի հեքիաթները (ծիծաղ, բուռն ծափահարություններ) տարածվում են իհարկե այն նպատակով, վորպեսզի մթագնեն իսպանական անցքերի նկատմամբ մեր ցուցաբերած իսկական հետաքրքրության իմաստը։

Հանձին Իսպանիայի այս դեպքի մենք դործ ունենք Ֆաշիզմի առաջին խոշոր յելույթի հետ՝ իր հայրենիքի սահմաններից դուրս։ Մենք դործ ունենք Իսպանիային բռնի կերպով, դրսից Ֆաշիստական կարդ պատվաստելու փորձի հետ, սվինի, նռնակների և ռումբի ոգնությամբ իսպանական ժողովրդի վրա Ֆաշիստական կառավարություն փաթաթելու փորձի հետ։ Ցեթե այդ փորձը հաջողվեր, ապա վոչ մի յերաշխիք չեր լինի, վոր դա ավելի ընդարձակ մասշտաբով չեր կրկնվի մյուս պետությունների նկատմամբ։

Դարձյալ, յեթե խոսքը վերաբերեր Ֆաշիզմին՝ վորպես սոսկ ներքին քաղաքական-սոցիալական հատուկ ռեժիմի, ապա մեր վերաբերմունքն ավելի հանդիստ կլիներ։ Չէ՞ վոր Իսպանիայում դոյություն է ունեցել կորուպցիոն միապետություն, վերջերս այնտեղ է յեղել գեներալ Պրիմո դը Ռիվերայի դիկտատուրան, բայց դա մեզ համեմատաբար քիչ է հուզել։ Սակայն այժմ խոսքը վերաբերում է այլ բանի՝ միջազգային բնույթ կրող յերևույթի, խաղաղությանն սպառնացող վտանգի իրական ուժեղացմանը, և միայն այդ բավական է մեր հետաքրքրությունն արդարացնելու համար։

# ԱԳՐԵՍԻԱՆ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐՆ Է

Անհրաժեշտ է յելնել այն բանից, վոր Ֆաշիզմը վոչ միայն հատուկ ներքին պետական ռեժիմ է, այլև միևնույն ժամանակ ագրեսիայի նախապատրաստումն է, մյուս պետությունների դեմ պատերազմելու նախապատրաստություն է: Սա Ֆաշիզմի մեր բնութագրումը չէ, այլ իր սեփական բնութագրումը: Ֆաշիզմը բոլոր տանիքներից աղաղակում է իր ագրեսիվության մասին, և վոչ միայն աղաղակում է այդ մասին, այլ տեղ-տեղ նաև արդեն իրականացրել է այդ: Ցես, ընկերնե՛ր, ձեզ խնդրում եմ վերհիշել այն, ինչ վոր առաջ ասացի Ֆաշիզմի էության ու մեթոդների մասին: Ցես ձեզ ասացի Ֆաշիստական յերկրի ընակչության դժգոհությունը ճնշելու յեղանակի մասին, բայց դա, այսպես ասած՝ բացառողական ծրագիր է: Ֆաշիզմն ունի նաև դրական ծրագիր: Սոակ մեխանիկական, վոստիկանական միջոցներով, ղնչակալներով կարելի յե միայն ժամանակավորապես փակել դժգոհների բերանը, բայց քանի վոր դրանով չեն վերանում դժգոհության պատճառները, իսկ այլ միջոցներով այդ պատճառները վերացնելու ընդունակ չե Ֆաշիզմը, ուստի գործի յեն դրվում այլ, այսպես կոչված հոգևոր միջոցներ՝ դժգոհ քաղաքացիներին մշակելու, յես կասեի, հիմարացնելու համար: Ֆաշիզմը, մենաշնորհյալ կերպով ազատագործելով մամուլը, գրահրատարակչությունները, ռադիոն և ադիտացիայի բոլոր այլ միջոցները, քաղաքացիներին ներշնչում է, թե իրենց ժողովուրդն ընտրյալ ժողովուրդ է, բոլոր ժողովուրդներից լավագույնը, մյուս վոչ լիարժեք ժողովուրդների վրա իշխելու կոչված ժողովուրդ: Նրանց պատմում են իրենց ինչ-վոր նշանավոր նախահայրերի մասին, հատուկ գարձրագույն ռասայի պատկանելու մասին: Ինչպես վոր մի ժամանակ սրբմիտիվ մարդկանց, նաև փոքրիկ յերեխաներին վախեցնում եյին անտառի վագրերի, անտյին վագրերի, Բեհեղզեբուղի, սատանայի, դեվերի, դեվիկների և այլ պիղծ ուժերի կարծեցյալ գոյությամբ, այնպես էլ Ֆաշիստական յերկրի քաղաքացիներին վախեցնում են կոմունիստներով, մարքսիստներով, դեմոկրատներով, ջհուդ-մասոններով, վորոնց անհրաժեշտ է անպայման հաղթահարել ու վոչնչացնել՝ յերջանկություն ձեռք բերելու համար: Գեղանկարվում են հրապուրիչ, ծաղկուն յերկիրներ, ինչպես որինակ՝ Ուկրաինան, Ուրալը և Սիբիրը (ծիծաղ), հումքով հարուստ դաշտեր: Միայն ցավն այն է, ասում են նրանց, վոր այդ գայթակղիչ յերկիրներն ու դաշտերը պատկանում են այլ ժողովուրդների: Հետևաբար անհրաժեշտ է նվաճել, ուժով խլել դրանք, իսկ դրա համար պահանջվում է սպառազինություն, դրա համար անհրաժեշտ է մեծ բանակ, հսկայական նավատորմ, մեծ ու բազմապիսի սպառազինություն: Պարզ է, վոր քաղաքացիները պետք է լաբեն իրենց

բոլոր ուժերը, դրկանքներ կրեն և իրենց բոլոր միջոցները տան ֆաշիստական պետությանը՝ ռազմական հզորություն ստեղծելու համար: Այսպիսով ամբողջ ժողովուրդն որ-ավուր դաստիարակվում է ագրեսիայի վոգով, և ագրեսիան բացահայտորեն դառնում է ֆաշիստական պետության ծրագիրը, իսկ ինքը ֆաշիզմը դառնում է ամենաանձարձակ շովինիզմի ու իմպերիալիզմի ֆունկցիան:

Իմ ասածները կարծեմ միանգամայն բավական են արդարացնելու համար այն հետաքրքրությունը, վորով մենք, վորպես ժողովուրդների միջև անխախտ խաղաղություն պահպանելու անհողդողդ կողմնակից մի պետություն, հետևում ենք նոր յերկիրներում ֆաշիզմը՝ վորպես ագրեսիայի դաղափարը կրողը՝ բանի կերպով պատվաստելու փորձին: Բայց այդ դեռ բոլորը չե:

Ֆաշիզմն իր ագրեսիվ նպատակների ստեղծման նախապատրաստությունն իրականացնում է վոչ միայն իր ռազմական ներությունն անչափ ուժեղացնելով, այլև նրանով, վոր միակողմանի կերպով ինքն իրեն ազատում է իրեն կապող բոլոր միջազգային պարտավորություններից կամ պարզապես խախտում է դրանք, յերբ այդ ձեռնտու յե իրեն, խուսափում է խաղաղությունն ամրացնելու գործում վորևե միջազգային համագործակցություն հաստատելուց, վորում է այդ խաղաղությունը պահպանելու կոչված միջազգային կազմակերպությունների հիմքը, կամպանիա յե մղում մյուս յերկիրներն իրարից բաժանելու և անվտանգության կոլեկտիվ կազմակերպումը թույլ չտալու համար: Նույն նպատակին և ծառայում նաև



մյուս յերկիրների մասին ստահոդ տեղեկություններ տարածելը, վորի համար ստեղծվում է պրոպագանդի մինիստրություն կոչվող պետական հատուկ հիմնարկ, դրա գլուխն է կանգնեցվում մի մարդ, վորը—պետք է ճշմարիտն ասել—վորպես ամենաանհեթեթ հերյուրանքներ և ամենատոհոդ տեղեկություններ ստեղծող ու տարածող, հանդիսանում է, ինչպես ասում են անգլիացիները, պատշաճ մարդ՝ պատշաճ տեղում (ծափահարություններ, ծիծաղ):

Ֆաշիզմն իր ռազմատենչ նիզակներն ուղղում է մասնավորապես Խորհրդային պետության դեմ, խոսքով՝ իբրև թե այն պատճառով, վոր այնտեղ կոմունիստական դաղափարներ են դավանում, բայց իրոք այն պատճառով, վոր Խորհրդային պետությունն ինքնըստինքյան հանդիսանում է ֆաշիզմի դիշատիչ իղձերի առարկան, ինչպես և հանդիսանում է խոչընդոտ՝ այլ ուղղություններով ֆաշիզմի ունեցած նվաճողական ձգտումների դեմ: Թեպետ ֆաշիզմն իշխանության գլուխ անցնելով հայտարարում եր, թե ինքը ձգտում է ամենալավագույն հարաբերություններ պահպանել Խորհրդային Միության հետ և նույնիսկ վավերացրեց բարեկամության ու չեզոքության Բեռլինի խորհրդային-գերմանական պայմանագրի յերկարաձգումը, բայց նա առանձնապես չսիրեց մեզ այն բանից հետո, յերբ մենք առաջարկեցինք նրան յերաշխիք տալ մեր ընդհանուր հարևանների անվտանգության ու ամբողջականության համար: Մեր դեմ ուղղված կատաղությունը միայն սատկացավ այն բանից հետո, յերբ մենք փոխադարձ ոգնության

պակս կնքեցինք Ֆրանսիայի հետ, վորին նա հայտարարել եր իր ժառանգական թշնամին, ինչպես և մեր Ազգերի Լիգայի մեջ մտնելուց ու այնտեղ մեր խաղաղության ծրագիրը ծավալելուց հետո:

Ֆաշիզմը, կառավարության միջոցով, մյուս յերկիրներում իր ունեցած վարձկան գործակալների ու քաղաքական բարեկամների ողնությամբ, փորձում է առավելագույն չափով ոգտագործել այդ յերկիրներում գոյություն ունեցող նախապաշարումները՝ սոցիալիզմ կառուցող յերկրի դեմ, նախ՝ նպատակ ունենալով քանդել այդ յերկիրների և Խորհրդային Միության, վորպես Ազգերի Լիգայի անդամների, միջև գոյություն ունեցող կապերը, և յերկրորդ՝ նպատակ ունենալով ֆինանսական ոժանդակություն ստանալ իր սպառազինումներն ուժեղացնելու համար, սպառազինումներ, վորոնք կարելի կլինի ուղղել վոչ անպայման Խորհրդային Միության դեմ:

Ինձ կարող են հարց տալ՝ ինչո՞ւ յեն մեզ անհանգստացնում Ֆաշիզմի ռազմական պատրաստությունները, յեթե դրանք խիստ վոչ անպայման հակախորհրդային նշանակություն ունեն: Ցեսս ինձ թույլ կտամ դրան պատասխանել մի անեկդոտով: Ցերբ մի մարդու, վորի վրա հարձակվել եյին հաջացող շները, հարցրին, թե ինչո՞ւ յե վախեցել, մի՞թե նա չգիտե, վոր հաջացող շները չեն կծում, նա պատասխանեց, վոր ինքն այդ գիտե, բայց վստահ չե, թե շներն էլ արդյոք այդ գիտե՞ն (ընդհանուր ծիծաղ): Մենք, բոլշևիկներս հաջացող շներից չենք վախենում, բայց, այնուամենայնիվ, հույս չենք դնի շների դի-



տակցության վրա (ընդհանուր ծիծաղ ամբողջ դահլիճում, ծափահարություններ), և ավելի լավ է դինվենք ավելի ամուր ու ավելի յերկար մահակով (ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ):

# ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐՁԻԳՆԵՐԻ ԲԼՈԿՆԵՐԸ

Դաշնակիցներ չգտնելով իր համար Ազգերի Լիգայի անդամների մեջ, վորոնք դեռ կանգնած են կոլեկտիվ անվտանգության դաղափարի հողի վրա, Ֆաշիզմը, մեկուսացած վիճակում մնալով, իր այդ մեկուսացածությունն արտաքուստ դունաղարդելու համար դիմեց այն փոքրաթիվ յերկիրներին, վորոնք գտնվում են նույնպիսի միայնության մեջ, բաժանում են նրա բացասական վերաբերմունքը դեպի Ազգերի Լիգան ու խաղաղության կազմակերպումը և նույնպես հետապնդում են ագրեսիվ նպատակներ, և բլոկ հաստատեց նրանց հետ, իբր թե «միջազգային կոմունիստական վտանգի դեմ» պայքարելու համար: Ճշդրտության համար նշեմ, վոր բլոկը կնքված է վոչ թե յերեք պետությունների միջև ընդհանուր կերպով, այլ Գերմանիայի ու Իտալիայի միջև ու առանձին Գերմանիայի ու Ճապոնիայի միջև: Ի դեպ՝ մենք ստույգ տեղեկություններ ունենք, վոր Իտալիան, ցանկանալով ինչ գնով եվ լինի ընթանալ իր նոր ուսուցիչ Գերմանիայի հետքերով, Ճապոնիային առաջարկեց իր հետ կնքել Ճապոն-գերմանական համաձայնության հրապարակված մասի նման մի համաձայնություն: Պարոն Մուսսոլինին, վորը տասը տարուց ավելի Խորհրդային Միության հետ վերին աստիճանի կորրեկտ հարաբերություններ է պահպանել, միջազգային կոմունիստական վտանգի մեջ համոզվեց միայն այն բանից հետո, յերբ Խորհրդային Միությունը լոյալ կերպով ու հետևողականորեն մասնակցեց Ազգերի Լիգայի ձեռնարկումներին՝ ընդդեմ Իտալիայի, վորը խախտել էր Ազգերի Լիգայի սրտը, ագրեսիա յեր կատարել և հափշտակել էր Հաբեշստանը, իսկ այնուհետև՝ յերբ Խորհրդային Միությունը հանդես յեկավ Իսպանիայում կատարվող ֆաշիստական ռազմական ինտերվենցիայի դեմ:

Կոմունիզմի դեմ պայքարելու այդ միջազգային համաձայնության հեղինակներն ըստ յերևույթին չեն նկատում, թե ինչպիսի ծիծաղելի դրության մեջ են դնում իրենց, յերբ խնդրում են իսկապես հավատալ այդ համաձայնությունների դաղափարական բնույթին: Նման ըմբռնմամբ այդ համաձայնությունները կարծեք թե պետք է խոսեն այն մասին, վոր գերմանական ֆաշիզմն իր յերկրում վոչ միայն կոմունիզմն ու մարքսիզմը, այլև նույնիսկ դեմոկրատիզմը բոլոր հնարավոր միջոցներով արմատախիլ անելու չորս տարվա հոմերական ջանքերից հետո նորից կանգնած է յերկրի ներսում կոմունիստական մեծագույն վտանգի առջև, վորին ինքն ի վիճակի չէ հաղթահարելու և հարկադրված է վորոնել ոտարերկրյա ոգնություն: Ճիշտ այդպես եվ իտալական ֆաշիզմն իր 14-ամյա թագավորությունից և յերկիրը կայսրության աստիճանին հասցնելուց հետո, կանգնեց կոմունիստական վտանգի հանդեպ, վորին նա կարող է հաղթահարել գերմանական ու ճապոնական ֆաշիզմի հետ միասնա-

բար գործելով միայն։ Ճապոնական կառավարությունը, վորն անգուլ պայքար է մղում յերկրում «վնասակար մարքերն» արմատախիլ անելու ուղղությամբ, չհասավ իր նպատակին և հարկադրված է իրեն ոգնության կանչել ռասաբերկրյա վոստիկանությանը։ Դուրս է գալիս, վոր կարծեք թե հենց ֆաշիստական յերկիրներն են խուճապով համակված իրենց մոտ կոմունիզմի հաղթական աճման հանդեպ։ Վոչ պակաս ծիծաղաշարժ են նաև այն նպատակները, վոր իբր թե դնում են իրենց առջև այդ համաձայնությունները և վորոնք կարող են լինել միայն հետևյալը,— ճապոնական կառավարությունը պարտավորվում է, հավանորեն, ժամանակին տեղեկություն տալ գերմանական կառավարությանն այն դեպքում, յերբ ճապոնական կոմունիստը վորոշի ապաստան վորոնել ազատ Գերմանիայում, և ընդհակառակը։ Գերմանական համակենտրոնացման ճամբարում կամ բանտում կոմունիստի համար տեղի ունություն լինելու դեպքում՝ ճապոնական և իտալական կառավարություններն ակներևաբար պարտավորվում են նրա համար բնակելի տարածություն գտնել իրենց բանտերում ու ճամբարներում (ծիծաղ), և ընդհակառակը։ Պետք է յենթադրել, վոր համաձայնության յեկող բարձր կողմերը պարտավորվել են նաև «Կոմունիստական Ինտերնացիոնալի» և նման այլ հրատարակությունների համարները վոչ տալ իրար, կամ դուցե նրանք կոլեկտիվ ստեղծագործության սկզբունքների հիման վրա կստեղծեն այնպիսի մի թերթ, վորը պետք է ապացուցի ֆաշիստական զաղափարների առավելությունը կոմունիստականների հանդեպ։



Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի այլ գործնական նպատակներ կարող են հետապնդել այդ յուրահատուկ միջազգային տրակտատները։

Զարմանալի չէ, վոր դատելով մամուլի արձագանքներով, այդ տրակտատների վերաբերյալ հաղորդագրությունները բոլոր վոչ-ֆաշիստական յերկրներում դիմավորվեցին դժվար զսպվող քաղաքավարի քրքիջով։ Իրազեկ մարդիկ հրաժարվում են հավատալուց, վոր ճապոն-գերմանական համաձայնության հրապարակված յերկու կցկտուր հոդվածները կազմելու համար անհրաժեշտ եր 15 ամիս բանակցություններ վարել, վոր այդ բանակցություններ վարելը հարկավոր եր հանձնարարել անպատման ճապոնական կողմից մի զինվորական գեներալի, իսկ գերմանական կողմից՝ մի դերդիվանագետի, և վոր այդ բանակցությունները պետք է տեղի ունենային արտակարգ գաղտնի պայմաններում, գաղտնի՝ նույնիսկ գերմանական ու ճապոնական պաշտոնական դիվանագիտությունից։

Զարմանալի չէ, յերբ յենթադրություններ են արվում, վոր ճապոն-գերմանական համաձայնությունը գրված է հատուկ ծածկագրով, վորի մեջ հակակոմունիզմը նշանակում է ամենևին վոչ այն, ինչ գրվում է բառարաններում, և վոր մարդիկ տարբեր ձևով են մեկնաբանում այդ ծածկագիրը։ Ճապոնական զինվորականությունը Մանջուրիայում, որինակ, յուրահատուկ ձևով է հասկացել ծածկագիրը և խախտելով բավական յերկար ժամանակվա ընթացքում խորհրդային-մանջուրական սահմանում թաղավորող խաղաղությունը, յերկու որվա ընթացքում յերկու հար-

ձակում գործեց խորհրդային տերիտորիայի վրա բավականաչափ զգալի ուժերով: Նա հաշվի չառավ, վոր Բեռլինի համաձայնությունը բնավ չի խանգարում կարմրադրոշ Հեռավոր-արևելյան բանակին՝ նրան տալու նույն պատասխանը, ինչ վոր տալիս եր նմանորինակ հարձակումների ժամանակ նաև առաջներում (ովացիա: Ամբողջ դահլիճը վոտքի յե կանգնում: Բացականչություններ՝ «կեցցե՛ Հեռավոր-արևելյան կարմիր բանակը», «Ուռա», «կեցցե՛ ընկեր Բլյուխերը»):

Պետք է յենթադրել, վոր ճապոնական զինվորականությունը հասկացավ այդ և հարձակումից հետո հաշվեց իր տարած վիրավորների ու խորհրդային տերիտորիայի վրա թողած դիակների և սպառազինման առարկաների թիվը: Մենք հույս ունենք, վոր հակառակ Բեռլինի համաձայնության, Մանջուրիայում գտնվող ճապոնական զինվորականությունը չի մոռանա Հեռավոր Արևելյան Բանակի համոզիչ խնդիրը՝ «իրենց զբոսանքների համար սահմանից հեռու խուզ վայրեր վորոնել» (ծիծաղ, ծափահարություններ):



# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԿԵՂԾԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՂԾԻՔԸ

Ինչ վերաբերում է հրապարակված ճապոն-գերմանական համաձայնությանը, ապա յես խորհուրդ կտայի իմաստ չվորոնել նրա մեջ, քանի վոր այդ համաձայնությունն-իսկապես վոչ մի իմաստ չունի այն պարզ պատճառով, վոր մի այլ համաձայնության քողարկումն է միայն, մի համաձայնություն, վորը միաժամանակ քննության է առնվել, վավերացվել և հավանորեն նաև ստորագրվել է, բայց վորը չի հրապարակվել ու հրապարակման յենթակա չէ: Յես պնդում եմ, դիտակցելով իմ խոսքերի ամբողջ պատասխանատվությունը, վոր հենց այդ գաղտնի փաստաթղթի մշակմանն են նվիրված յեղել—մի փաստաթուղթ, վորի մեջ կոմունիզմ բառը նույնիսկ չի եկ հիշատակվում—ճապոնական զինվորական կցորդի և գերմանական գերդիվանագետի միջև տեղի ունեցած 15-ամսյա բանակցությունները:

Վերջերս կնքված համաձայնությունների ազրեսիվ բնույթը բղխում է արդեն այն բանից, վոր այդ համաձայնությանը մասնակցում են Ազգերի Լիգայից հեռացած յերեք պետություններ: Ճիշտ է, Իտալիան ձևականորեն դեռ մասնակցում է Ազգերի Լիգային, բայց նրա մասնակցությունն այն է, վոր— ինչպես

պարոն Մուսոլինին ինքը հենց վերջերս հրապարակորեն հայտարարեց—նա կարեկցաբար ցանկանում է Լիգայի շուտափույթ մահը: Այդ յերեք պետություններն էլ հայտնի յեն իրենց ագրեսիվությամբ և ուրիշի տերիտորիաների վրա հարձակումներ գործելով, պայքարում են կոլեկտիվ անվտանգության ու խաղաղության անբաժանելիության սկզբունքների դեմ: Արդեն իսկ այդ հանգամանքը չարադուշակ բնույթ է տալիս այդ համաձայնություններին և մատնանշում է այն սպառնալիքը, վոր դրանք ներկայացնում են ընդհանուր խաղաղության, անվտանգության և շատ յերկիրների շահերի համար:

Ի միջի այլոց, Ֆաշիստական յերկիրների ակտիվությունը վերջին ժամանակներս յերևան բերեց նրանց մի քանի քաղաքական՝ իբր թե ծրագրային հայտարարություններն ու լոզունգների սմբողջ կեղծավորությունն ու կեղծիքը: Գերմանական Ֆաշիզմը, որինակ, պնդում եր, թե ինքն սկզբունքորեն դեմ է բոլոր տեսակի միջազգային դաշինքներին ու կոմբինացիաներին, բացի միմյանց վրա չհարձակվելու պայմանագրերից, այն էլ սահմանակից հարևանների հետ կնքված: Սակայն նա համաձայնություն կնքեց տասնյակ հաղարավոր կիլոմետրերով իրենից հեռու գտնվող, մի քանի պետություններով իրենից բաժանված Ճապոնիայի հետ, և բնավ վոչ չհարձակվելու համաձայնություն: Գերմանական Ֆաշիզմը յերդվում եր, թե ինքը պաշտպանում է պատերազմը լոկալիզացիայի յենթարկելու սկզբունքը: Բայց Ճապոնիայի հետ կնքված համաձայնությունը տենդենց ունի մեկ



ցամաքում ծագած պատերազմը տարածելու ամենաքիչը յերկու, յեթե վոչ ավելի ցամաքների վրա: Իտալական Ֆաշիզմը հարեշական եքսպեդիցիայից հետո հայտարարում եր, վոր իր տերիտորիալ ախորժակները լիովին բավարարված են և վոր ինքն այսուհետև պատրաստ է համագործակցելու խաղաղության կայունացման գործին, իսկ այժմ նա մասնակցում է ագրեսիվ համաձայնությունների սիստեմին: Չի չահի նաև Ճապոնական կառավարության անկեղծության համարումը, մի կառավարություն, վորը մեզ հավատիացնում է Խորհրդային Միության հետ խաղաղ հարաբերություններ հաստատելու իր ձգտման մեջ, և մեզ դրդում է հանուն այդ բանի ընդառաջ գնալ իրեն հետաքրքրող մի քանի վիճելի հարցերի կարգավորման գործում, իսկ այժմ գաղտնի ագրեսիվ համաձայնություն է կնքել Գերմանիայի հետ: Ճապոնական կառավարությունը մեզ հավատիացնում եր նաև այն բանում, վոր իրեն առաջարկված՝ միմյանց վրա չհարձակվելու պակտը դեռ մինչև այժմ էլ քննության է առնվում իր կողմից և կարող է կնքվել բոլոր վիճելի հարցերը կարգավորելուն պես, իսկ այժմ նա այդպիսի պակտերի կնքումը կախման մեջ է դրել Գերմանիայի համաձայնությունից, նվազեցնելով իր արտաքին քաղաքականության ինքնուրույնությունը:

Հակադեմոկրատական Ֆաշիստական ագրեսիվ յերկիրներն իրենց խոսքն ասացին: Նրանք ասացին, վոր չեն ցանկանում մասնակցել խաղաղության կազմակերպման, բոլոր ժողովուրդների անվտանգության

ապահովման նպատակին ծառայող ընդհանուր միջազգային համագործակցությանը: Նրանք իրար հետևից մարտակոչ են ուղղում խաղաղասեր, առաջին հերթին դեմոկրատական ժողովուրդներին: Խոսքն այժմ այդ ժողովուրդներին է պատկանում:



# ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՂԵԼ Է, Է ՅԵՎ ԿԼԻՆԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միությունը հիմք չի տեսնում փոխելու իր քաղաքականությունը, մի քաղաքականություն, որը յեղել է, է և կլինի խաղաղության քաղաքականություն (յերկարատև ծափահարություններ): Նա այդպիսի խաղաղություն ցանկանում է իր համար և այլ ժողովուրդների համար, այդ պատճառով էլ առաջարկել է նրանց իր համագործակցությունը: Նա մյուսներից սպասում է վոչ թե խաղաղության վերաբերյալ խոսք, այլ այդ խաղաղությունը կազմակերպելու ուղղությամբ կիրառվող գործողություններ: Խորհրդային Միությունը, սակայն, խրոխտաբանությունը չի լինում ստեղծելու վո՛չ մի դաշինք, վո՛չ մի բլոկ, վո՛չ մի կոմբինացիա: Նա հանգիստ կերպով թույլ կտա մյուս պետություններին կյանքը և գնահատելու այն ուղուղը, որ կարելի յե հանուն խաղաղության շահերի քաղել իր հետ ունեցած սերտ համագործակցությունից և հասկանալու, որ Խորհրդային Միությունը կարող է ավելի շատ տալ, քան թե ստանալ (ծափահարություններ):

Կնքված համաձայնությունները, որոնց մասին մենք այսոր խոսեցինք, վոչ մի բան չեն փոխում ի-

բերի փաստական դրության մեջ։ Վտանգ են ներկայացնում վոչ թե պայմանագրերը, վո՛չ թե նրանց տակ դրված ստորագրությունները, ինչպիսի արժեք էլ ունենան դրանք, այլ այն, վոր կան պետություններ, վորոնց կառավարություններն իրենց արտաքին քաղաքականությունը կառուցում են դեպի խաղաղությունը տածած արհամարհանքի վրա, ագրեսիայի ու գիշատչության սկզբունքների վրա և ձգտում են հափշտակել այն ամենը, ինչ վոր լավ պաշտպանված չի։ Սակայն, մեզ այդ չի վախեցնում, վորովհետև մենք չունենք վոչ մի բան, վորը լավ պաշտպանված չլինի (ծափահարություններ)։ Առավել մեծ սպառնալիքի տակ են ընկել այլ պետություններ, այլ տիրակալություններ։

Մեր անվտանգությունը կախված չե թղթե դոկումենտներից և արտաքին քաղաքական կոմբինացիաներից։

Խորհրդային Միությունն ինքնըստինքյան բավականաչափ ամուր է։ Նա ամուր է իր բոլոր մասերի միաձուլությամբ, միակցությամբ ու կանոնավորությամբ, և այդ ամբողջությունն է՝ ավելի կուժեղանա, յերբ կամբարձնվի նոր հիանալի ցեմենտով, ցեմենտ, վորպիսին հանդիսանում է մեր համադումարի կողմից ընդունվող նոր Սահմանադրությունը։ Խորհրդային Միությունն ամուր է իր տերիտորիայի վրա բնակվող բոլոր ժողովուրդների ձգտումների միասնությամբ և նրանց վոգեշնչող միասնական նպատակով։ Նա ամուր է իր իսկական դեմոկրատիզմով։ Նա ամուր է իր ամբողջ բնակչության գործունակ հայրենասիրության անընդհատ աճող վոգով։ Նա ամուր է իր սահմաններից դուրս միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր աշխատավորների կողմից իր հանդեպ ցուցաբերվող հսկայական համակրանքով ու սիրով։ Նա ամուր է կառավարական իշխանության կենտրոնացվածությամբ և ղեկավարող կոմունիստական կուսակցության հեղինակությամբ (ծափահարություններ)։ Նա ամուր է իր ստախանովականներով, իր հերոս ողաչուներով և սպորտի բոլոր բնագավառների ռեկորդսմեններով։ Նա ամուր է բազմաքանակ կոմյերիսմիության և խանդավառությամբ համակված ամբողջ աճող ներնդի կողմից դեպի պետությունն ու նրա իդեաները ցուցաբերվող անսահման նվիրվածությամբ։ Նա ամուր է իր անսպառ բնական հարստություններով, իր վիթխարի արդյունաբերության անդադրում վերելքով ու հզորությամբ։ Նա ամուր է հողագործության կոլտնտեսային ձևերով։ Նա ամուր է իր ուժի ու անպարտելիության գիտակցությամբ (ծափահարություններ)։ Նա ամուր է վերջապես բոլորի կողմից սիրված զորավար ընկեր Վորոշիլովի գլխավորած իր պանծալի Կարմիր բանակով ու Կարմիր նավատորմով (բուռն ծափահարություններ։ Բոլորը վոտքի յեն կանգնում և ջերմ ովացիա յեն սարքում ի պատիվ ընկեր Վորոշիլովի։ Հուժկու «ուռա՛»-ն թնդում է դահլիճում)։

Մենք վստահ ենք, վոր յեթե հասնի այն որը, յերբ մեր բանակն ու նավատորմը հարկադրված լինեն հանդես գալու ի պաշտպանություն հայրենիքի, ապա ռազմական ստախանովականությունը, բազմապատկված այդպիսի դեպքերում առաջացող խանդա-

վստահությամբ, աշխարհին ցույց կտա անճնաշոտ քաջության, հերոսության, դյուցազնության և պատերազմելու բոլշևիկյան հմտության՝ բոլոր ժամանակների ու ժողովուրդների պատմության մեջ չտեսնված օրինակ (ծափահարություններ)։

Ցեռ վստահ եմ, և դուք բոլորդ նույնպես վստահ եք, ընկերնե՛ր, որ մեր Խորհրդային Միությունը անսասան կմնա և հպարտորեն դեպի վեր կխոյանա՝ վորպես անմատչելի ամրոց, վորին զարնելով կըփշրվեն ֆաշիստական մոլեգնող ծովի դորշ ալիքները (բուռն ծափահարություններ)։ Այդ վստահությունն ել ավելի յե ամրապնդվում մեր մեջ այն բանի գիտակցությամբ, վոր այդ ամրոցի կառավարումը և նրա բանալիները գտնվում են այնպիսի մի պարեսի ձեռքում, ինչպիսին ե մեր պանծալի, մեծ առաջնորդ ընկեր Ստալինը (բուռն, յերկարատև ծափահարություններ։ Բոլորը վոտքի յեն կանգնում։ Փոթորկալից ծափեր, ցնծագին բացականչություններ— «Ուռա՛», «Կեցցե՛ ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինը»)։

ՊԵՏԱԿԱՆ
ՄՐԹՎԱ
Հ. Ս. Խ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ֆաշիզմը դեմոկրատիզմի և ազատությունների դերեզմանափորն . . . . . 7
Արևմտյան Ցեվրոպայի յերկիրների անվտանգությունը օպառնալիքի տակ . . . . . 14
Խորհրդային զենքերայնների և ինտերվենտների պատերազմը հանրապետական Իսպանիայի դեմ . . . . 17
«Զմիջամտելու» ֆարսը . . . . . 20
Խորհրդային ժողովրդի համերաշխությունն Իսպանիայի ժողովրդի հետ . . . . . 25
Աղբեսիան ֆաշիստական պետությունների դրաղերն ե . . . . . 28
Պատերազմի հրձիգների բլոկները . . . . . 34
Խաղաղության թշնամիների կեղծավորությունն ու կեղծիքը . . . . . 39
Մեր քաղաքականությունը յեղել ե, ե և կլինի խաղաղության քաղաքականություն . . . . . 43

Թարգմ. Ակշ. Խոնդկարյան, խմբ. Մ. Հովհաննիսյան
Սբբ. Վ. Ջիդեջյան, տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Սրբոյան

Գլավլիտի լիազոր № 1110—A, հրատ. № 418,
պատվեր № 842, տիրաժ 15.000, ինդեքս П-84 РК
Հանձնված է արտադրության 22/XII 1936 թ.
Ստորագրված է տպագրության 4/I 1937 թ.

ԳԻՆԸ 50 կ.

*Հայկուսհրատի տպարան, Երևան*
*Աբովյան № 71*

ՀՀ Ազգային գրադարան
NL0977665

4 ФЕВ. 1957 54

1
3686

ԳԻՆԸ 50 կ.

М. М. ЛИТВИНОВ

# СССР
# МОГУЧИЙ ОПЛОТ ВСЕОБЩЕГО МИРА

Армпартиздат, Ереван, 1937